Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

ՍԻՄՈՆՅԱՆ Վ. Ռ.

1878 թ. «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի»ստեղծման տեղի, ժամանակի, կազմելու գործում Ի. Պասկևիչի,Պ. Զավիլեյսկու մասնակցության, «Նախագծի» մերժման, դրա շուրջ առկա բացասական կարծիքների մասին մեր նախորդ հրապարակումից հետո[1] խիստ կարևոր է նորովի վերլուծել վերոհիշյալ «Նախագծով» «Ընկերության» համար խնդրվող մենաշնորհային արտոնությունների, «Ռուս-անդրկովկասյան» և անգլիական «Օստ-հնդկական» (Արևելահնդկական - Ս. Վ.) ընկերությունների համեմատության, «Ընկերության» տրամադրության տակ ազատագրված ճորտերի և հայ վերաբնակիչների կարգավիճակի, ինչպես նաև Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծի» մերժման պատճառների շուրջ ստեղծված՝ խորհրդային պատմաբանների հակասական, իրարամերժ և միակողմանի մեկնաբանությունները: «Նախագծի» հեղինակների ժամանակակից Ն. Մուրավյով-Կարսկին գրում է. «Երբ Գրիբոյեդովը մեկնել էր Պետերբուրգ, տարված լինելով երևակայությամբ և իր գաղափարներով, նա կազմեց ամբողջ Վրաստանը վերակառուցելու նախագիծ, որտեղ կառավարումն ու արդյունաբերության ոլորտները Օստ-հնդկական ընկերության նման, պետք է պատկանեին Ընկերությանը («Ռուս-անդրկովկասյան»-Ս. Վ.)»[2]: Ն. Մուրավյով-Կարսկին «Ռուս-անդրկովկասյան ընկերությունը» նմանեցնում էր անգլիական «Օստ-հնդկական ընկերությանը»: Քաղաքական-գաղափարական պատվերը չէր կարող այսպիսի համեմատության հանդեպ անտարբեր թողնել խորհրդային պատմաբաններին: Բանն այն է, որ մինչև 1951 թ. Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հայացքներին անդրադարձող խորհրդային որոշ պատմաբաններ համակերպվել են Ն. Մուրավյով-Կարսկու համեմատության հետ:

Վ. Պաշուտոն 100 մլն ռուբլուց ավելի բաժնետիրական կապիտալով և 120.000 դեսյատին հողով «Ռուս-անդրկովկասյան ընկերությունը» նմանեցնում է «Օստ-հնդկականին»[3]: Նրանից առաջ համանման կարծիք է հայտնում Ն. Պիկսանովը՝ ավելացնելով, որ Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «կոմերցիոն ընկերությունը» Անդրկովկասում «Ռուս-ամերիկ-

---

[1] **Սիմոնյան Վ. Ռ.,** 1828 թ. «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի գնահատման շուրջ» (Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, N 2, էջ 112-121):

[2] *Грибоедов А. С. Его жизнь и гибель в мемуарах современников, ред. и примеч. Зин. Давыдова, Л., 1929, с. 135.*

[3] **Пашуто В. Т.**, *Дипломатическая деятельность А. С. Грибоедова (Исторические записки, т. 24, М., 1947, с. 135).*

յան» կամ «Օստ-հնդկական» ընկերությունների նման իր առջև առևտրի և արդյունաբերության ահռելի խնդիրներ էր դրել[4]:

1951 թ. Մ. Նեչկինայի ջանքերով «Ընկերության» նմանեցումը «Օստ-հնդկական ընկերությանը» համարվեց սխալ: Նա գրում է. *«Օստ-հնդկական ընկերությունը, որի թալանչիական եկամուտը կերակրեց ծնունդ առնող անգլիական կապիտալիզմը, 1828 թ. արդեն լրիվ անկում էր ապրում և ծաղկող տնտեսական ընկերության գայթակղիչ օրինակ չէր: Ն. Մուրավյով-Կարսկու համեմատությունն ակնհայտորեն արդարացի չէ»*[5]*:* Իր տեսակետը հիմնավորելու համար նա նշում է, որ «Նախագծի» հեղինակները ոչինչ չեն գրում «Օստ-հնդկական ընկերության» մասին, այլ իրենց «Ընկերությունը» համեմատում են «ուսանելի օրինակ հանդիսացող» Հյուսիսամերիկյան Միացյալ Նահանգների հետ[6]: Ըստ Մ. Նեչկինայի՝ անգլիական «Ընկերությունը» թալանում էր պատրաստի եղածը, ուներ մենաշնորհ առևտրի իրավունք և արտադրական նպատակներ չէր հետապնդում, իսկ «Ռուս-անդրկովկասյան ընկերության նախագծի» նպատակն էր Վրաստանում զարկ տալ արդյունաբերությանը և որպես երկու «Ընկերությունների» միջև եղած զգալի տարբերություն նշում է «Նախագծում» «Օստ-հնդկականի հոգին կազմող առևտրային մենաշնորհների բացակայությունը...»[7]: «Ռուս-անդրկովկասյան ընկերության» համար հեղինակների խնդրած մենաշնորհներն իբր պետք է «հատուկ ակտով օրենք դառնային և ժամանակավոր բնույթ կրեին»: Մ. Նեչկինայից հետո այս հարցը կամ շրջանցվել, կամ էլ մեկնաբանվել է նույն կերպ: Օրինակ՝ Ս. Շոստակովիչը գրեթե կրկնում է Մ. Նեչկինային. «....Նախագիծն այլ տիպի ընկերություն էր ցանկանում ստեղծել, քան Արևելքում լավ հայտնի անգլիական Օստ-հնդկական ընկերությունը: Նախագիծը նկատի չուներ ընկերության առևտրային մենաշնորհները, բայց մեծ ուշադրություն էր դարձնում Անդրկովկասում արդյունաբերության ստեղծմանը, այնտեղ տարբեր ձեռնարկություններ հիմնելուն...»[8]: «Կանոնադրության» տեքստը մեզ չի հասել, բայց կարծում ենք՝ «Օստ-հնդկականի» հետ նմանության մասին, այնուամենայնիվ, խոսք եղել է: Բանն այն է, որ Ա. Գրիբոյեդովի ժամանակակիցներից ոչ մեկը, բացի Ն. Մուրավյով-Կարսկուց, այս մասին չի վկայում, և հարգարժան Մ. Նեչկինան, Ս. Շոստակովիչն ու *մյուսները հարց չեն հարուցում, թե ինչո՞ւ հենց միայն նա է այդ մասին վկայում:* Չի բացառվում, որ հատկապես նրանց միջև «ընկերությունների» համեմատության մասին խոսակցություն եղել է: Հակառակ դեպքում Ն. Մուրավյով-Կարսկին կարող էր վկայակոչել մեկ այլ «ընկերություն» կամ թեկուզ՝ «Ռուս-ամերիկյան առևտրային ընկերությունը», որի օրինակն ակնառու էր: Այստեղից էլ նոր հարց է ծագում. *ինչո՞ւ*

---

[4] **Пиксанов Н. К.,** *Грибоедов А. С., Исследования и характеристики, Л., 1934, с. 147.*
[5] **Нечкина М. В.,** *Грибоедов и декабристы, М., 1951, с. 541.*
[6] **Грибоедов А. С.,** *Сочинения в 2-х томах, т. 2, М., 1971, с. 110.*
[7] **Нечкина М. В.,** նշվ. աշխ., էջ 541:
[8] **Шостакович С. В.,** *Дипломатическая деятельность А. С. Грибоедова, М., 1960, с. 194.*

պետք է այդ չեղած «համեմատությունը» քննարկման նյութ դարձներ Մ. Ժուկովսկին: Համեմատությունը բնական ենք համարում, որովհետև Ա. Գրիբոյեդովի ժամանակ «Օստ-հնդկականի» և «Ռուս-անդրկովկասյանի» նման մասշտաբային այլ ընկերություններ համարյա չկային: Ակնհայտ է, որ Մ. Նեչկինան և մյուսները ճգնում են ապացուցել, որ Ա. Գրիբոյեդովի առաջադիմական «Նախագիծն» ընդհանուր ոչինչ չէր կարող ունենալ «թալանչիական» «Օստ-հնդկական ընկերության» հետ: «Ընկերության» համար «Նախագծի» հեղինակների խնդրած առևտրային արտոնությունները բնույթով չէին զիջում «Օստ-հնդկական ընկերության» արտոնություններին: Կնշանակի՝ տարբեր առնչություններով ցարիզմի գաղութային քաղաքականության քննադատությունները խորքային չեն, և դա առավել ցայտուն երևում է հենց այս օրինակով, որովհետև խորհրդային պատմաբաններն ակնհայտորեն խուսափում են խոստովանել, որ *երկու «Ընկերությունների» համեմատության մեջ ընդհանուր եզրեր կան. երկուսն էլ հետապնդում էին գաղութատիրական նպատակներ: Եթե «Նախագծի» հեղինակները տեքստում չեն հիշատակում «Օստ-հնդկական ընկերության» անունը, ոչինչ չի նշանակում: Իսկ ԱՄՆ-ի հետ համեմատությունն այլ իմաստ ունի. այստեղ խոսքը վերաբերում է Անդրկովկասում «լուսավորյալ և հարուստ բնակչություն» ունենալուն, որը կօգներ վերացնել միմյանց հանդեպ թշնամությունը և «կանձահարեր» լեռնական ժողովուրդներին: Սրան հասնելու համար է, որ բերվում է ԱՄՆ-ի օրինակը:*

«Այսպիսով,- գրում է ինքը՝ Ա. Գրիբոյեդովը,- անտառները մաքրելով կամ դաստակերտներ և ցորենի դաշտեր հիմնելով՝ *գիշատիչ գազաններն անհետանում են՝ իրենց տեղը զիջելով մարդուն կերակրող ընտանի հեզ կենդանիներին (կարելի է ենթադրել՝ ռուս գնված ճորտերին և հայ վերա-բնակիչներին - Ս. Վ.):* Հյուսիսամերիկյան Միացյալ Նահանգները ներկայացնում են դրա ամենաուսանելի օրինակը...»[9]:

Մ. Նեչկինան և մյուսները, հակադրվելով Ն. Պիկսանովի և Վ. Պաշուտոյի ավելի հիմնավոր կարծիքներին, ամեն դեպքում, առավել շրջահայացություն չեն ցուցաբերում և շրջանցում են Մ. Ժուկովսկու հետևյալ դատողությունների մեկնաբանությունը. «*...Այն իրենց (ամերիկացիների - Ս. Վ.) նախկին հայրենիք Անգլիայի առումով իրո՛ք ուսանելի է ոչ միայն տնտեսական, այլև՝ քաղաքական մասով...*»[10]: ԱՄՆ-ի «ուսանելի» օրինակի առնչությամբ նշենք, որ այդ գաղութնահանգները (հատկապես՝ հարավային) գոյատևում էին պլանտացիոն ստրկական աշխատանքի հաշվին, իսկ դրա (աբոլիցիոնիզմի) վերացման համար պայքարը ավարտվելու էր միայն 1865 թ., ինչի մասին, բնականաբար, Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին 1828 թ. իմանալ չէին կարող: Փաստերը վերլուծելու՝ *Մ. Ժուկովսկու կարողությունները վկայում են, որ չնայած նա պետական պաշ-*

---

[9] **Гривоедов А. С.,** *նշվ. աշխ., էջ 110:*

[10] **Маркова О. П,** *Новые материалы о Проекте Российско – Закавказской компа-нии А. С. Грибоедова и П. Д. Завелейского (Исторический архив, т. IV, М., 1951, с. 361).*

տոնյա էր, բայց լուրջ մտահոգություններ ուներ հասարակական բարօրության և ընդհանուրի շահերի պաշտպանության ուղղությամբ:

Մեկնաբանելով «Ընկերության» կողմից արտոնություններ ստանալու հարցը՝ Մ. Ժուկովսկին գրում է. «....Անդրկովկասյան գավառներում, որտեղ աշխատասիրությամբ և գործունեությամբ դեռ ոչինչ արված չէ, նոր ձեռնարկումների հանդգնող Ընկերությունը Օստ-հնդկական կամ Հյուսիսամերիկյան-ռուսական ընկերությունների նման *պետք է օժտվի բացառիկ արտոնություններով, որոնք Ընկերությունից կհեռացնեին նրան վնաս պատճառող այլ անձանց և միություններին...»*[11]*:* Զուգահեռներ անցկացնելով «Օստ-հնդկական ընկերության» հետ՝ Մ. Ժուկովսկին շարունակում է. «...Անգլիայում էլ Օստ-հնդկական ընկերության արտոնությունները չեն տարածվում ո՛չ Անգլիային սահմանակից կղզիների և գավառների, ո՛չ էլ նոր ձեռք բերած վայրերի վրա... և դուրս է գալիս, որ այս արտոնությունները ոչ բոլոր վայրերում են պետքական. *եթե Անգլիայի կառավարությունն այն ժամանակ նույնքան ուժ և կարողություն ունենար, որքան ունի հիմա՝ առանց Օստ-հնդկական ընկերության, ինքնուրույն հպատակեցնելու և կառավարելու ժողովուրդների, ապա Օստ-հնդկական ընկերությունը կարող էր գոյություն չունենալ»*[12]:

Դժվար թե Մ. Նեչկինան և խորհրդային մյուս պատմաբանները տեղյակ չլինեին վերոհիշյալ փաստերին: Պարզապես պետք էր ապացուցել, որ *Ա. Գրիբոյեդովի առաջադիմական նախագիծն ընդհանուր ոչինչ չէր կարող ունենալ թալանչիական «Օստ-հնդկական ընկերության» հետ:* Ինչ վերաբերում է «Ընկերության» համար պահանջվող արտոնություններին, ապա դրանք իրենց բնույթով չէին զիջում անգլիական «Օստ-հնդկական ընկերության» արտոնություններին: Այս հարցը խորհրդային գրիբոյեդովագետները գրեթե միշտ շրջանցել են, քանի որ «Նախագծի» ամենախոցելի մասն է:

Քննենք «Ընկերության» համար պահանջվող արտոնությունների հարցը: Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին կոմս Ի. Պասկևիչ-Էրիվանսկուն ներկայացնում էին Կովկասից այս կողմ ընկած բարեբեր հողերում գինեգործություն, մետաքսագործություն, բամբակագործություն և այլ արտադրություններ կազմակերպելու նախագիծ[13] և դրա համար պահանջում էին հետևյալ արտոնությունները. 1) 120.000 դեսյատին անմշակ հողերի հատկացում, 2) պետությանը պատկանող բոլոր այգիների տրամադրում, 3) նոր բուսատեսակներ աճեցնելու, վայրի բույսեր հավաքելու բացառիկ իրավունք, 4) «Ընկերության» հողերում վերաբնակեցվածների ու գաղութաբնակների ազատում պետական հարկերից ու տուրքերից, 5) արդյունաբերության ոլորտում մասնավոր անձանց և ընկերությունների նորամուծությունների արգելում, 6) առանց մաքսի «ընկերության» արտադրանքի արտահանում և անհրաժեշտ ապրանքների ներմուծում, իսկ այլոց կողմից դրանց ներմուծման դեպքում բարձր մաքսերի վճարում կամ արգելում, 7) առանց «Ընկերության» կարծիքը հաշվի առնե-

[11] Նույն տեղում, էջ 357-358:
[12] Նույն տեղում, էջ 359:
[13] **Грибоедов А. С.,** *նշվ. աշխ., էջ 90:*

լու՝ այլ ընկերություններին արտոնությունների տրամադրման բացառում, 8) Անդրկովկասում և Ասիայում նորանվաճ տարածքների վրա «Ընկերության» իրավունքների տարածում, 9) Սև ծովի ափին պորտոֆրանկոյի (ազատ նավահանգստի) տրամադրում:

Իրենց խնդրանքների հիմնավորումը հեղինակները խարսխում էին 1807 թ. հունվարի 1-ի «Բարձրագույն մանիֆեստի» և 1821 թ. հոկտեմբերի 8-ի «Հրամանագրի» վրա: Սակայն Մ. Ժուկովսկին այս առնչությամբ հակադրվելով հեղինակներին, փաստում է, որ 1821 թ. «Հրամանագիրը» թույլ չէր տալիս ընտրությամբ լավագույն հողեր հատկացնել, ինչպես նաև չէր տրամադրում «Նախագծում» նշվածի նման արտոնություններ[14]: Հեղինակների նշած Օդեսայի օրինակով նոր նվաճվելիք Բաթումին պորտոֆրանկոյի կարգավիճակ շնորհելու և այն «Ընկերությանը» հանձնելու հարցի մասին խոսելով՝ *Մ. Ժուկովսկին տարակուսում է, թե ի՞նչ օգուտ Ռուսաստանին Օդեսայի պորտո-ֆրանկոյից, քանզի այնտեղ նավահանգիստը կառավարությանն է, իսկ արդյունաբերությունը՝ բնակչությանը*[15]:

Ֆրանսիայի հյուպատոս Գամբային կամ դուքս Անհալտին Կովկասում կառավարության կողմից հող հատկացնելու մասին «Նախագծի» հեղինակների բերած օրինակները[16] համոզիչ չեն, քանզի հեղինակների խնդրած տարածքները, ըստ Մ. Ժուկովսկու, ընդգրկելու էին «մի ծովից մյուսը և հանդերից զրկված մյուս տարածքները կախված կլինեն հատկացված տարածքներից և անպետք կդառնան բոլորի համար...»[17]:

Մ. Ժուկովսկին դեմ է արտահայտվում պետական այգիները մեկ «Ընկերությանը» տալուն, քանզի նրա կառավարիչները կարող են խաբել և՛ «Ընկերությանը» և՛ պետությանը[18]: Իսկ «Ընկերությանը» հարկերից ազատելու մասին նա գրում է. «Պատշա՞ճ է արդյոք, որ կառավարությունն իր վրա վերցնի ապագա անհայտ ժամանակների և հանգամանքների պարտավորությունները»[19]: Առանձին-առանձին մեկնաբանելով առևտրական արտոնությունները՝ Մ. Ժուկովսկին առաջ է քաշում հետաքրքիր հարցեր. 1) ինչպե՞ս պետք է «Ընկերության» ապրանքներից տարբերել ներմուծվողները. արդյո՞ք դա ներմուծման մենաշնորհի չի հանգի, 2) արտասահմանցիները կարող են վճարել (կաշառել - Ս. Վ.), որ-պեսզի «Ընկերությունը» չխանգարի իրենց առևտրին[20]:

Արտահանմանը վերաբերող արտոնության մասին խոսելիս նա դարձյալ հարցեր է առաջ քաշում, թե ի՞նչ արտադրանք էր մնալու արտահանել տեղաբնակներին և ինչպե՞ս էին դրանք տարբերելու «Ընկերությանը» պատկանող ապրանքատեսակներից: Դա կարող էր դատական անվերջ քաշքշուկների հանգեցնել: Իր միտքը Մ. Ժուկովսկին արտահայտում է

---

[14] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 387:
[15] Նույն տեղում, էջ 388:
[16] **Грибоедов А. С.,** *նշվ. աշխ., էջ 93:*
[17] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 366-367:
[18] Նույն տեղում, էջ 388:
[19] Նույն տեղում, էջ 370:
[20] Նույն տեղում, էջ 381:

հետևյալ բազմանշանակ հարցով. «Մի՞թե դա է ազգը լուսավորելու ձևը՝ արգելք դնելով լուսավորության պտուղների վրա...»[21]: Իսկ ինչո՞վ էին «Ընկերության» համար խնդրվող արտոնությունները զիջում «Օստ-հնդկական ընկերության» արտոնություններին, կամ ինչո՞վ էին դրանք նպաստելու Անդրկովկասում արտադրողական ուժերի զարգացմանը:

Խորհրդային պատմագրությունը ուշադրություն է դարձրել հատկապես «Ռուս-անդրկովկասյան ընկերության» հողերում գյուղացիներ վերաբնակեցնելու և բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից ազատելու հարցերին՝ որպես Ա. Գրիբոյեդովի հակաճորտատիրական հայացքների դրսևորում: Բանն այն է, որ «Նախագծի» հեղինակները խնդրում էին թույլ տալ ճորտ գյուղացիներ գնել Ռուսաստանում և վերաբնակեցնել «Ընկերության» հողերում՝ նրանց ազատելով ճորտությունից ու բոլոր տեսակի հարկերից՝ պայմանով, որ նրանք 50 տարի աշխատեին «Ընկերության» համար: Այս առումով Մ. Ժուկովսկին նկատում է. «...Ո՞վ կապրի մինչև ճորտական վիճակից ազատվելը, քանզի 50 տարին մարդու դարն է...»[22]: Նույն տեքստում, մեկ ուրիշ առիթով զարգացնելով այս միտքը՝ Մ. Ժուկովսկին գրում է. «...Ընկերությունը, որքան ասես, կարող է գյուղացիներ գնել ու նրանց աշխատանքն օգտագործել ընկերության պլանտացիաներում, որոնք գտնվում են այնպիսի շոգ վայրերում, որտեղից նույնիսկ տեղաբնակներն են հեռանում լեռները...: Եվրոպացիներն իրենց գաղութներում այդպիսի պլանտացիաներում օգտագործում են նեգրերի և աքսորված հանցագործների, իսկ այստեղ Ռուսաստանի գյուղացիները պետք է ծառայեն նեգրերի և հանցագործների փոխարեն...»[23]: Մ. Ժուկովսկու կարծիքով՝ այս ամենը վնաս էր պատճառելու պետությանը, քանի որ պլանտացիաներում մահացության տոկոսը բարձր էր, և անընդհատ աշխատուժի պահանջ էր առաջանալու, պակասն էլ համալրվելու էր դարձյալ ռուս գյուղացիներով: Դրա հետևանքով կարող էր նվազել ռեկրուտների (հավաքագրվածների - Ս. Վ.) թիվը: Ինչ վերաբերում է վերաբնակեցվածներին գաղութաբնակի կարգավիճակ տալուն և բոլոր հարկերից ու տուրքերից ազատելուն, ապա Մ. Ժուկովսկին, առարկելով հեղինակներին, գրում է. «Այսպիսի պայմաններով ո՞վ չի համաձայնի Ռուսաստանից և այստեղից (Վրաստանից - Ս. Վ.) անցնել «Ընկերության» հպատակության տակ»[24]: Նա հարցնում է, թե այդ դեպքում ով պետք է պետության հարկերն ու տուրքերը վճարի և այս արտոնությունը համեմատում է երբեմնի Եվրոպայում կաթոլիկ եկեղեցուն շնորհված համանման արտոնությունների հետ, ինչի հետևանքով պետությանը ծառայող գրեթե չէր մնացել: Փաստորեն, Մ. Ժուկովսկին դեմ էր արտոնություններին, որովհետև դրանք վնասում էին պետությանը: Նրան համակարծիք է Ա. Մալշինսկին: Վերաբնակեցվածների և նրանց հարկերից ազատելու մասին խոսելիս նա գրում է. «Ընդհանրապես Ընկերությունը, գյուղացիներին (ռուս - Ս. Վ.) ազատելով ճորտությունից, ամեն տեսակի բարիք էր

[21] Նույն տեղում, էջ 378-379:
[22] Նույն տեղում, էջ 370:
[23] Նույն տեղում, էջ 367:
[24] Նույն տեղում, էջ 370:

խոստանում միայն 50 տարի հետո, իսկ մինչ այդ ժամկետի վերջը անդրկովկասցիները (տեղաբնիկները - Ս. Վ.), եթե ուշադրության առնենք Ընկերության արտոնությունները, պետք է այնտեղ ծառայեին որպես աշխատողներ (վարձու - Ս. Վ.) և աշխղեկներ (*տՐՌՍՈՋԻՌՍՌ* - Ս. Վ.)»[25]:

Ամփոփելով գյուղացիներ գնելու և նրանց 50 տարով Ընկերության հպատակությամբ պահելու մասին Մ. Ժուկովսկու և Ա. Մալշինսկու տեսակետները՝ եզրակացնում ենք, որ նրանք դա ճորտությունից ազատում չէին համարում, ինչն իր հերթին նշանակում է, որ իր ընկերներին հղած բազմաթիվ նամակներում ճորտատիրական կարգերը քննադատող Ա. Գրիբոյեդովը, եթե նույնիսկ ճորտատիրության կողմնակից չէր, ապա, դրա վերացման ջերմ կողմնակիցն էլ չէր: Առանձին տվյալների վրա հենվելով՝ որոշ խորհրդային պատմաբաններ նույնիսկ պնդում են Ա. Գրիբոյեդովի՝ ճորտատիրական կարգերի կողմնակից լինելու հանգամանքը: Ն. Պիկսանովը գրում է. «Քանի որ Ընկերությունը չէր կարող սեփական ճորտեր ունենալ, ապա նրա ծրագրով, Ընկերության տիրապետության տակ անցնելով՝ ճորտ գյուղացիներն ազատվում էին ճորտության վիճակից, բայց հատուկ պայմանով. 50 տարի ծառայել «Ընկերության» պլանտացիաներում: Այսպիսով, Ռուսաստանում գնված գյուղացիներն իրավաբանական անձի՝ կոլեկտիվ կալվածատեր Անդրկովկասյան ընկերության մոտ մինչև կյանքի վերջը փաստորեն կմնային ճորտի կախյալ վիճակում...»[26]: Ա. Գրիբոյեդովին ճորտատիրական կարգերի կողմնակից համարող Ն. Պիկսանովը նախքան «Ռուս-անդրկովկասյան ընկերության» մասին խոսելը անդրադառնում է մի բավական հետաքրքիր պատմության, որը թեև ոչ անմիջականորեն, բայց ապացուցում է Ա. Գրիբոյեդովի համաձայնությունը ճորտատիրական կարգերին: Խոսքը Կոստրոմայի գավառում նրա մորը՝ Նաստասյա Ֆեոդորովնային պատկանող կալվածքում 1816-1819 թթ. գյուղացիական հուզումների մասին է (քառամյա այդ հուզումների վերջում Ա. Գրիբոյեդովն արդեն 24 տարեկան էր): Գյուղացիական հուզումներն այնքան էին ծավալվել, որ միջամտել էր նույնիսկ բանակը: Ա. Գրիբոյեդովը չէր կարող չիմանալ մոր և գյուղացիների առճակատման մասին, սակայն, ինչպես նշում է Ն. Պիկսանովը, հայտնի չէ ոչ մի փաստաթուղթ, որտեղ Ա. Գրիբոյեդովը խոսեր այդ, էլ չենք ասում «ճորտատիրուհի-մորը» դեմ գնալու և ճորտ գյուղացիներին պաշտպանե-լու մասին: Ն. Պիկսանովի մեջբերած՝ Ստ. Բեգիչևին ուղղած Գրիբոյեդովի նամակից երևում է, որ նա ոչ միայն չէր հակառակվում մոր ճորտատիրական կեցվածքին, այլև անտարբեր էր նրա ճորտերի վիճակի ու ճակատագրի նկատմամբ և հաճույքով էր ծախսում նրանցից քամված գումարները: Այսինքն՝ փայլուն կրթության և առաջադեմ հայացքների տեր Ա. Գրիբոյեդովն իր առջև ճորտատիրական կարգերը վերացնելու համար պայքարի խնդիր չէր դրել:

Սակայն խորհրդային պատմագրությունը չէր կարող այսպիսի բնութագրում թույլ տալ, և որոշ պատմաբանների ջանքերով հարցը որոշվեց

---

[25] **Мальшинский А. П.,** *Неизданная записка А. С. Грибоедова (Русский Вестник), т. 216, СПб., 1891, с. 14-15).*
[26] **Пиксанов Н. К.,** նշվ. աշխ., էջ 147-148:

հոգուտ «ճորտատիրական կարգերի հակառակորդ» Ա. Գրիբոյեդովի: Օգտվելով Օ. Մարկովայի հրապարակումից՝ Մ. Նեչկինան սուր քննադատության ենթարկեց ֆեոդալական կարգերի կողմնակից Մ. Ժուկովսկուն, ինչը հարկավոր չէր անել դեկաբրիստ Ի. Բուրցովի դեպքում: Մ. Ժուկովսկու այն կարծիքը, թե վերաբնակեցվածներին «Ընկերության» ենթակայության տակ աշխատեցնելը նույն ճորտատիրական կախյալ վիճակն էր լինելու, Մ. Նեչկինան համարեց սխալ, քանի որ, ըստ նրա, «Ընկերության» «ձեռքի տակ» անցնելով՝ գյուղացիները դառնում էին կապիտալիստական վարձու աշխատողներ, ձեռք էին բերում որոշ իրավունքներ (առանց տիրոջը հարցնելու՝ ամուսնանալու, շարժական ու անշարժ գույք ունենալու և այլն): Բացի այդ՝ եթե ոչ իրենք, ապա գոնե նրանց երեխաներն արդեն ճորտեր չէին լինի: Զուգահեռներ անցկացնելով Ա. Գրիբոյեդովի ու Պ. Զավիլեյսկու այս «Նախագծի» և Նիկիտա Մուրավյովի «Սահմանադրության» միջև՝ Մ. Նեչկինան նշում է, որ չնայած նրան, որ Ն. Մուրավյովը գյուղացիներին ճորտությունից ազատելու դեպքում ամեն ընտանիքին ընդամենը երկու դեսյատին հող էր հատկացնում, սակայն դրանով նրան ոչ մեկը դեռ դուրս չի թողնում ճորտատիրական իրավունքի հակառակորդների կազմից: Մեր կարծիքով, այս օրինակը և մոտեցումը միակողմանի են, քանզի Մ. Նեչկինան չի ավելացնում նաև, թե քանի դեսյատին հող էր տրամադրելու կամ սոցիալական ինչ կարգավիճակ էր սահմանելու 50 տարի հետո Ա. Գրիբոյեդովի «Նախագիծը»: Խոսելով գյուղացիներին հարկերից ազատելու՝ Մ. Ժուկովսկու հայտնած կարծիքի մասին («այդպիսի պայմաններով ով չի համաձայնի» պետության կախվածությունից անցնել «Ընկերության» ենթակայությանը)՝ Մ. Նեչկինան դա համարում է ինքն իրեն հակասելու փաստ և եզրակացնում է. «...Ակնհայտ է, որ նույնիսկ Ժուկովսկին չէր կարող չընդունել բնակչութ-յան համար այն օգուտները, որոնք կարող էին լինել «Անդրկովկասյան ընկերության նախագծի» իրագործման շնորհիվ...»[27]: Սակայն հարգարժան ակադեմիկոսը չի փորձում ցույց տալ, թե այդ ո՞ր արտոնությունների և ճորտությունից բարեկեցիկ կյանքի անցնելու մասին է խոսքը, որն ակամայից «ստիպված էր ընդունել» Մ. Ժուկովսկին: Այդ ո՞ր օգուտներն էին, որոնց համար ռուս ճորտ գյուղացին պատրաստ էր ևս 50 տարի (՞) մնալ, այս անգամ էլ՝ կոլեկտիվ կալվածատիրոջ ենթակայության տակ և ամեն ինչ սկսել զրոյից: Այս մասին դեռ կխոսենք վերջում, բայց նշենք, որ Մ. Նեչկինայի միակողմանի տեսակետն այս կամ այն կերպ կրկնում են խորհրդային մյուս պատմաբանները, սակայն որոշ վերապահումներով, երբեմն զգույշ կամ ակամա ընդունելով «Ընկերության» «ձեռքն անցնող» գյուղացիների ստրկական (կաբալային) վիճակը կամ նման ծրագրե-րի համար *Անդրկովկասի թույլ ու հետամնաց լինելը: Օ. Պոպովան «Ընկերության նախագծով» 50 տարով գյուղացիներին ամրացնելու մասին գրում է. «...Դրանք, անկասկած, կաբալային պայմաններ էին, բայց գյուղացիների վիճակն ըստ «Նախագծի» ավելի թեթև էր, քան անվերապահ հավերժ ճորտական կախվածությունը: Գյուղացին աշխատավարձ կստա*

[27] **Нечкина М. В.,** նշվ. աշխ., էջ 544:

նար և կալվածատիրոջ լիակատար սեփականությունը չէր լինի»[28]*:* Օ. Պոպովայի մեկնաբանությունը ևս միակողմանի է, քանզի նա հաշվի չի առնում, որ աշխատավարձ ստացող «կաբալային» գյուղացին Ռուսաստանի մյուս ճորտերի նման չէր ունենալու տուն, տնամերձ, ընտանի թռչուններ և կենդանիներ, այսինքն՝ ամբողջովին կախված էր լինելու «Ընկերության» հայեցողությունից:

Մեկ այլ ծայրահեղության մեջ է ընկնում Օ. Մարկովան: Նա գրում է. *«....Գյուղացիներ գնելու և 50 տարի պլանտացիաներում նրանց աշխատեցնելու մասին կետն, անկասկած, հակասում է նախագծի առաջադիմական բնույթին..., սակայն Գրիբոյեդովի նախատեսած՝ գյուղացիների գնումը նշանակում էր եթե ոչ փաստացի, ապա իրավաբանական ազատում ճորտատիրական իրավունքից...»*[29]*:* Ինչպես տեսնում ենք, Օ. Մարկովան Օ. Պոպովայի նման ստիպված էր ընդունել, որ «Ընկերության» տիրապետության տակ գյուղացիների վիճակը «փաստացի» լինելու էր ճորտական: Կարծում ենք՝ Օ. Մարկովայի նշած «իրավաբանական ազատությունն» այս պարագայում արժեզրկվում է, քանի որ այդ գյուղացիները, եթե նույնիսկ այդ ժամանակ լինեին 25-30 տարեկան, ազատության պտուղները կճաշակեին 75-80 տարեկանում: Քանի՞ տարեկան էին լինելու նրանց երեխաները:

Այս թեմային առնչվող վերջին հարցը «Նախագծի» մերժմանն է վերաբերում: Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծի» մերժման հիմնական պատճառներից մեկը խորհրդային պատմագրությունը համարում է այն, որ Ի. Պասկևիչը դրանում տեսել է իր իշխանությանը սպառնացող վտանգ: Դրա համար կարծես հիմք է հանդիսացել Ն. Մուրավյով-Կարսկու հետևյալ միտքը. «...Պասկևիչի իշխանությունը համարյա կատարելապես ոչնչացնող այս նախագիծը չէր կարող դուր գալ նրան, և ժամանակի ընթացքում այն ոչ մեկի կողմից ուշադրության չարժանացավ...»[30]: Օ. Պոպովան, կրկնելով Ն. Մուրավյով-Կարսկուն, գրում է. «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» մեծությունն ու թափը սարսափեցրին Պասկևիչին, որը նրանում տեսավ իր իշխանության նվազումը, քանի որ Գրիբոյեդովն ինքն էր ցանկանում Ընկերության գլուխ կանգնել՝ հավանաբար վախենալով զուտ պետական ձեռքերում իր նորարար մտքի աղավաղումից...»[31]:

«Նախագիծը» մերժելու պատճառներից նշվում են նաև պետության գաղութացման ծրագրին հակասող, պետության դերի նսեմացմանը նպաստող, ինչպես նաև հակաանգլիական ուղղվածություն ունեցող այն արտոնությունները, որոնք նախատեսվում էին ծրագրով: Օ. Մարկովան գրում է, որ նախագծված լինելով մասնավոր նախաձեռնության գործունեության համար և հակասելով կառավարության գաղութային քաղաքականությանը, նախապես դատապարտված էր ձախողման[32]: «Նախագծի»

---

[28] **Попова О. И.,** *Грибоедов – дипломат, М., 1964, с. 120.*
[29] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 331-332:
[30] *Грибоедов А. С., Его жизнь и гибель..., с. 136.*
[31] **Попова О. И.,** նշվ. աշխ., էջ 121:
[32] **Маркова О. П.**, նշվ. աշխ., էջ 344:

մերժման հակաանգլիական ուղղվածության մասին Ս. Շոստակովիչը գրում է. «Անգլիական կապիտալի գործակալներին վտանգավոր պետք է թվար Գրիբոյեդովի միտքն այն մասին, որ Ընկերությունն իր առևտրով պետք է ընդգրկեր ռուսական Անդրկովկասն ու Իրանը»[33]: Իսկ Վ. Պաշուտոն, Ս. Շոստակովիչից առաջ ասել է հետևյալը. «...Այս նախագիծը չէր կարող հաջողություն ունենալ նաև արտաքին գործերի նախարարությունում, քանի որ իր էությամբ հակաանգլիական էր..., բավական է հիշել, որ Ադրիանուպոլսի պայմանագրում Ռուսաստանին Բաթումի անցնելու հարցը, որն առաջարկել էր Ի. Պասկևիչը, Կ. Նեսսելրոդեն (արտգործնախարար – Ս. Վ.) թողեց առանց ուշադրության...»[34]: Հետաքրքիր է նաև Ի. Պասկևիչի կենսագիր իշխան Շչերբատովի բնորոշումը, որը մեջ է բերում Վ. Թունյանը՝ «Նախագիծը» ճանաչվել է «հասարակության համար անօգուտ»[35]:

Ա. Մալշինսկին, մի քայլ առաջ անցնելով Ն. Մուրավյով-Կարսկուց, «Նախագծի» մերժման պատճառ էր համարում նախատեսվող արտոնությունների շնորհիվ «Ընկերության» մենաշնորհային դիրքի գրավումը, ինչը հանգեցնելու էր պետության դերի նսեմացմանը՝ առաջինը դարձնելով «պետություն պետության մեջ»[36]: Հետխորհրդային շրջանում գրիբոյեդովագետ Վ. Թունյանը պաշտոնական տեսակետին հակառակվելու շատ զգույշ մի փորձ է կատարում: Նա գրում է. «…Այնպիսի մի երկրամասում, որը դեռ երեխայի պես թույլ է և չունի սեփական ուժ, ամեն տեսակի արտոնյալ ընկերություն կամաց-կամաց իրեն կենթարկի արդյունաբերության բոլոր ոլորտները, ժողովրդին կկանխի (կխոչընդոտի - Ս. Վ.) սպառման բոլոր հնարավորություններում և նրան կստիպի միայն իրեն վաճառել նրա արտադրանքը ամենացածր գնով: Այսպիսի անբարենպաստ գործողություններով... ժողովուրդը կմնա իր նախկին տգիտության մեջ...»[37]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է հանգել հետևյալին.

- Չնայած «Կանոնադրության» տեքստի բացակայությանը՝ խորհրդային պատմագրությունը, Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագիծը» «Օստ-հնդկականի» հետ ոչ մի ընդհանուր եզր չտեսնելու միտումով, շրջանցում է այն (ինչու պետք է «Ռուս-անդրկովկասյան» և «Օստ-հնդկական» ընկերությունների՝ իրար նման լինելու օգտին համեմատությունը դարձնել քննարկման նյութ): *«Ընկերության» համար խնդրվող արտոնությունները և մենաշնորհային դիրքը ցույց են տալիս, որ երկու «Ընկերություններն» էլ ունեին և հետապնդում էին գաղութատիրական նպատակներ:* ԱՄՆ-ի «ուսանելի» օրինակի առումով շրջանցվում են Մ. Ժուկովսկու դատողությունները:

---

[33] **Шостакович С. В. ,** նշվ. աշխ., էջ 196:

[34] **Пашуто В. Т.**, նշվ. աշխ., էջ 137:

[35] **Тунян В. Г.,** ***А. С.*** *Грибоедов и Армения, Е., 1995, с. 55 (հղում է արված Ս. Շերբատովի գրքից՝* **Щербатов А. П.,** *Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность, т. III, СПб., 1891, с. 333¤.*

[36] **Мальшинский А. П.,** նշվ. աշխ., էջ 14:

[37] **Тунян В. Г.,** նշվ. աշխ., էջ 55:

- Ռուսաստանում գյուղացիներ գնելու և 50 տարով «Ընկերության» ենթակայության տակ պահելու մասին Մ. Ժուկովսկու, Ա. Մալշինսկու տեսակետները թույլ են տալիս եզրակացնել, որ, լինելով առաջադեմ գործիչ, Ա. Գրիբոյեդովը, եթե նույնիսկ ճորտատիրության կողմնակից չէր, ապա, ամեն դեպքում, դրա վերացման ջերմ կողմնակիցն էլ չէր: Փայլուն կրթության և առաջադեմ հայացքների տեր Ա. Գրիբոյեդովն իր առջև ճորտատիրական կարգերը վերացնելու համար պայքարի խնդիր չէր դրել, իսկ նրա «Նախագծում» ճորտերին վերաբերող հոդվածների էությունը բացահայտող Մ. Ժուկովսկու և Ա. Մալշինսկու տեսակետները Մ. Նեչկինայի, Օ. Մարկովայի, Օ. Պոպովայի և այլոց կողմից քննադատվել և լուսաբանվել են միակողմանի, քանզի նրանց ժխտողական վերաբերմունքի մեջ ակնհայտ են ենթադրական-կամայական, հաճախ էլ՝ իրարամերժ մոտեցումները: Ինչքան էլ քաղաքական հրամայականը և դասակարգային մոտեցումները պահանջում էին Ա. Գրիբոյեդովին ներկայացնել հակաճորտատիրական պայքարի լույսի ներքո, ամեն դեպքում «Նախագծի» շուրջ եղած դիտողություններն իրականում դրա հիմքերը չեն տալիս: Կարծում ենք, որ Ա. Գրիբոյեդովի նման, լինելով այդ դարաշրջանի ազնվականության ներկայացուցիչ և ինքնակալական կարգերի համոզ-ված կողմնակից[38], առաջին հերթին պաշտպանելով պետության շահը, Մ. Ժուկովսկին, ամեն դեպքում ճորտատիրության մոլի կողմնակից չէր: Նրա փաստարկները ազգը լուսավորելու, արտոնությունների և մենաշնորհների առումով ինքնին վկայում են, որ նա կողմնակից էր մասնավոր ձեռնարկատիրությանը և ազատ մրցակցությանը:

Քանի որ «Կանոնադրության» տեքստը մեզ չի հասել ամբողջությամբ, չպարզաբանված են մնում մի շարք հարցեր, որոնք շրջանցվել կամ պարզապես անդրադարձի չեն արժանացել խորհրդային պատմագրության կողմից: Թվարկենք մի քանիսը: 1) Ինչո՞ւ պետք է 50 և ոչ թե 40 կամ 60 տարով ծառայեին գյուղացիները «Ընկերության» ենթակայության տակ: 2) Մեկ ճորտի համար վճարված գինը քանի՞ տարում պետք է դուրս գար «Ընկերության» հաշվեկշռից, և որքա՞ն էր կազմելու մեկ ճորտի տված եկամուտը: 3) Ի՞նչ վարձատրություն, թոշակներ և նպաստներ էին նախատեսում Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին՝ աշխատողների հիվանդության, հաշմանդամության կամ մահացության դեպքում: 4) Ի՞նչ պատժամիջոցներ էին նախատեսվում վատ աշխատելու կամ դրանից խուսափելու դեպքում: 5) Ի՞նչ կարգավիճակ էին ունենալու ճորտությունից «ազատագրված» գյուղացիները: 6) Փրկագին լինելո՞ւ էր, թե՞ ոչ: 7) Որտե՞ղ էին ապրելու, ինչ էր նախատեսվում և ո՞ւմ «ձեռքի տակ» էին հայտնվելու գնված գյուղացիները, եթե «Ընկերությունը» սնանկանար, կամ իրեն չարդարացնելու պատճառով պետությունը դադարեցներ նրա գործունեությունը: Նույնը՝ հայ գաղթականների առնչությամբ: Թվարկումը կարելի է շարունակել, սակայն բավարարվենք այդքանով: Նշենք,

---

[38] **Սիմոնյան Վ.,** Ա. Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ և դրանց շրջանցումը խորհրդային պատմագրության կողմից, Ե., 2006, էջ 182-192 (գրքում բերված են կայսեր անձի վեհացման, տիրասիրության և միապետության կողմնակից լինելու մասին վկայություններ Ա. Գրիբոյեդովի նամակներից):

որ *դրանց մասին Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին իրենց պատկերացումները պարզապես չեն ներկայացրել: Հակառակ դեպքում «Նախագիծը» քննադատող Մ. Ժուկովսկին անպայման կանդրադառնար* դրանց:

Այն, որ նա մռայլ գույներով է ներկայացնում «ճորտությունից ազատված» և «Ընկերության» հողերում ծառայության անցնող գյուղացիների վիճակը, վկայում է, որ Մ. Ժուկովսկին այդ գյուղացիների նոր կարգավիճակը նախկին ճորտականից բարվոք չի համարել, այսինքն՝ հոգու խորքում, այնուամենայնիվ, ճորտությունը՝ որպես բնական վիճակ, չի ընդունել: Այլ խոսքով, եթե անգամ Մ. Ժուկովսկին լոյալ վերաբերմունք ունենար ճորտատիրության հանդեպ, ապա «Նախագծի» այդ հոդվածների հանդեպ կցուցաբերեր անտարբերություն:

- Ինչ վերաբերում է Մ. Նեչկինայի այն պնդմանը, թե Մ. Ժուկովսկին էլ է ընդունել բնակչության համար օգուտները, եթե նրանք անցնեին «Ընկերության» տրամադրության տակ, նշենք, որ նա Մ. Ժուկովսկու այս միտքն էլ է օգտագործել ծաղկաքաղի մեթոդով՝ փորձելով ներկայացնել որպես ենթատեքստ, քանզի չի նշում, առավել ևս չի մեկնաբանում վերոհիշյալ թվարկված հարցերը:

Չենք կարծում, որ 1861 թվականից 33 տարի առաջ «Ընկերության» ենթակայության տակ անցնող անգրագետ ճորտերը Մ. Ժուկովսկու նման քաջ կգիտակցեին սպասվող օգուտները: Եթե 1828 թ. ռուսական կառավարությունը հաստատեր «Նախագիծը», ապա 50 տարի հետո «Ընկերության» կենդանի մնացած գյուղացիները կախվածությունից կազատվեին միայն 1878 թ., այն դեպքում, երբ ճորտատիրությունը Ռուսաստանում վերացվեց միայն 1859-1861 թթ. հեղափոխական իրադրությունից հետո՝ 1861 թ. «Ռեֆորմով» ու «Կանոնադրությամբ»: *Իսկ Մ. Ժուկովսկին ինչ-որ բան գոնե հասկացել էր դրանից շատ առաջ և դեմ էր, որ «Ընկերության» պլանտացիա-ներում ռուս գյուղացիներին ու հայ գաղթականներին աշխատեցնեին «նեգրերի և հանցագործների» նման, ինչ է թե նրանց հետնորդներն ազատվելու էին ճորտական վիճակից:*

Մեր կարծիքով, «Նախագիծը» մերժելու պատճառներից ամենակարևորը «Ընկերության» կողմից նախատեսվող արտոնությունների շնորհիվ մենաշնորհային դիրք գրավելն ու դրանով պետության դերի նսեմացումն էր: Մենաշնորհային ընկերություններ հիմնելու արգելքը պետական քաղաքականություն էր, և մնացած պատճառները դրա համեմատությամբ երկրորդական են:

- «Նախագիծը» մերժելու հարցում Ի. Պասկևիչի դերակատարության վերաբերյալ ասենք, որ բազմիցս նշելով Ա. Գրիբոյեդովի հանդեպ Ն. Մուրավյով-Կարսկու անբարյացակամությունը՝ խորհրդային պատմագրությունը (քանի որ խոսքն այս դեպքում հետադիմական Ի. Պասկևիչին է վերաբերում), հանկարծ սկսում է հենվել նույն Մուրավյով-Կարսկու մեկ այլ պնդման վրա, ըստ որի, «Նախագծի» մերժման գլխավոր պատճառն այն էր, որ Ի. Պասկևիչը դրանում տեսել է «իր իշխանությունը կատարելապես ոչնչացնող» մի փաստաթուղթ: Կարծում ենք՝ Ի. Պասկևիչն իրոք չէր պատկերացնում, որ իր «հովանավորյալ» Ա. Գրիբոյեդովն իր «ջանքերում» այդքան հեռուն կգնար: Իսկ այն, թե «Նախագիծն» ինչու չարդարացրեց Ի. Պասկևիչի հույսերը, *չի բացառվում, որ նա հասկացավ, թե*

«Նախագիծը» Ա. Գրիբոյեդովին ինչ լայն հնարավորություններ և անձեռնմխելիություն էր ընձեռելու, այսինքն՝ ստեղծվելու էր «պետություն պետության մեջ»: Այս դեպքում պետության շահերը պաշտպանող Ի. Պասկևիչն ինչո՞ւ պետք է չպատկերացներ, որ այդ «Նախագիծը» իր կողմից կայսրին ներկայացնելու դեպքում նույն կերպ չէր մտածելու կայսրը: Ի վերջո, Ի. Պասկևիչի հանդեպ կայսր Նիկոլայ I-ն էլ կարող էր անվստահությամբ վերաբերվել, ինչպես դա եղավ Ա. Երմոլովի պարագայում:

Պետք է նշել, որ «Նախագիծը» պարունակում էր այն ժամանակվա համար առաջադիմական գաղափարներ՝ ուտոպիստական երանգներով: Հակադրվելով այս մասին Վ. Պաշուտոյի կարծիքին՝ կարծես երկիմաստ ակնարկով, ակամայից փորձում է հիմնավոր անդրադառնալ Մ. Նեչկինան, որը գրում է. «*Ուսումնասիրվող փուլում նրա գաղափարական զարգացման առումով այն ուտոպիստական է և անհուսալիորեն ձգտում է արհեստականորեն ստեղծված կապիտալիստական տարր ներմուծել Ռուսաստանի ֆեոդալաճորտատիրական շրջանակների մեջ...»*[39]: Ինչպես որ Ա. Գրիբոյեդովի «Հռադամիստ և Զենոբիա» և «Վրացական գիշեր» ստեղծագործությունների ենթադրական վերլուծություններով[40] Մ. Նեչկինան փորձում է վեր հանել նրա հեղափոխական գաղափարների հասունացումը (՞), այնպես էլ այստեղ, «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» վերաբերյալ վերոհիշյալ կարծիքով ջանում է ցույց տալ Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական գաղափարների զարգացումը, *որով, ավելի ավարտուն տեսք է ստանում «տաղանդավոր տնտեսագետ, հմուտ դիվանագետ և հեղափոխական դեկաբրիստ» Ա. Գրիբոյեդովի կարծրատիպը:*

Խորհրդահայ պատմաբան Վ. Պարսամյանը գրում է. «Դա դարերով ասիական հետամնաց ֆեոդալական կարգերում լճացած, փտած երկիրը կարճ ժամանակամիջոցում ոտքի կանգնեցնելու և *զարգացման նոր ու ավելի բարձր աստիճանի վրա դնելու գիգանտ մտքի ծնունդ էր: Դա Անդրկովկասը մանկական վիճակից դուրս բերելու և Ռուսաստանի ծաղկած մարզերից մեկը դարձնելու* լուսամիտ մի ծրագիր էր»[41]: Այսպիսի գերադրական կարծիքի համար հիմք են ծառայել «Նախագծի» հատուկ անդրադարձը վերաբնակեցվող հայերի մասին և Ա. Գրիբոյեդովի դերը Պարսկաստանից հայերի ներգաղթի կազմակերպման գործում: Եթե մի կողմ դնենք հարցի հանդեպ խորհրդային պատմաբանների դասակարգային մոտեցումը, ապա դժվար թե նրանք այս նախագիծը Անդրկովկասի և Ռուսաստանի համար առաջադիմական համարեին: *Այս «Նախագիծը», Անդրկովկասը ուժով նվաճելուց հետո, նախատեսում էր տնտեսական նվաճում կամ, այլ կերպ ասած, Անդրկովկասի ամբողջական գաղութացում: Տարբերությունն այն է, որ ցարիզմը դա իրականացնում էր կոպիտ, ուժային մեթոդներով, իսկ Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին ընտրել*

---

[39] **Нечкина М. В.,** նշվ. աշխ., էջ 544-545:
[40] Նույն տեղում, էջ 530-537:
[41] **Պարսամյան Վ. Ա.,** Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները,Ե., 1947, էջ 160:

էին դրա քաղաքակիրթ տարբերակը: Անդրկովկասի և Ռուսաստանի ընդհանուր զարգացման գործում «Ռուս-անդրկովկասյան ընկերությունը» կխաղար բացասական դեր, որովհետև նրա նպատակը Անդրկովկասում մենաշնորհային դիրք գրավելն էր: Օրինակ՝ Ս. Շոստակովիչը, քննարկելով «Նախագծից» մի հատված, գրում է. «...Նախագծում Գրիբոյեդովը զարգացնում է Կովկասը խաղաղ ճանապարհով նվաճելու մասին երմոլովյանից այնքան տարբերվող իր գաղափարը»[42]: Ապա շարունակում է. «...Զորքով երբեք հնարավոր չէ սանձել հակառակորդին, երբեք հնարավոր չէ այնպես սանձել և խաղաղեցնել թշնամությունը, որքան դա կարող է անել կրթված և հարուստ բնակչությունը...»[43]:

Ավարտելով մեր մեկնաբանությունները՝ փաստենք, որ *Ա. Գրիբոյեդովը, լինելով լեհական ակունքներով (Գրիբովսկի) ռուս ժողովրդի մեծ զավակ, առաջին հերթին պաշտպանում էր ցարական Ռուսաստանի նվաճողական, հետո իր անձնական և ապա Անդրկովկասի ժողովուրդների շահերը:*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ А. С. ГРИБОЕДОВА

СИМОНЯН В. Р.

Резюме

В советской историографии “Проект учреждения Российско– Закавказской компании” А. С. Грибоедова был представлен в качестве “шедевра” экономической мысли. При этом в советской историографии весьма односторонне истолковываются вопросы, связанные с получением монопольных прав для “Закавказской Компании”, и со статусом российских невольных крестьян и армян-переселенцев, которые должны были быть переданы компании, а также с причинами отклонения “Проекта” со стороны правительства.

Всестороннее исследование данной проблемы приводит к заключению, что согласно “Проекту”, “Компания” также имела колониальный характер. При этом А. С. Грибоедов не был ярым сторонником отмены крепостничества и всячески обходил проблемы статуса и вопросы дальнейшей судьбы крестьян и армян.

---

[42] **Шостакович С. В.,** նշվ. աշխ., էջ 195:
[43] Նույն տեղում, էջ 195: